

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի 2-րդ հոդվածում`

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ1» «գ2» կետերով.

«գ1) ներդրումային ֆոնդի կառավարչի.

գ2) վճարահաշվարկային կազմակերպության.».

2) 1-ին մասի 2-րդ պարբերությունը ««ներդրումային ընկերություն»» և «ներդրումային ընկերությունը» բառերից հետո լրացնել համապատասխանաբար «, «ներդրումային ֆոնդի կառավարիչ», «վճարահաշվարկային կազմակերպություն»» և «, ներդրումային ֆոնդի կառավարիչը, վճարահաշվարկային կազմակերպությունը» բառերով.

3) 5-րդ մասը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: